

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՅԻՍ 2010)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2010 թվականի հունիսի 8-ի նիստի «2010 թվականի հունիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (<http://www.armstat.am>), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը` ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների և ՀՀ միջազգային պահուստների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով` նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները` հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս` (374 10) 592-562
Ֆաքս` (374 10) 583-631
Էլ. փոստ` sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է`
<http://www.cba.am>

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2010 թվականի հունիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ.....	19
Իրական հատվածի ցուցանիշներ	22
<i>Մակրոտնտեսական ցուցանիշներ</i>	
<i>Գների ինդեքսներ</i>	
<i>Գնաճ</i>	
<i>Գնաճին առավելապես նպաստող ապրանքախմբերը</i>	
<i>Բնականոն գնաճ</i>	
<i>Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները</i>	
Արտաքին հատվածի ցուցանիշներ	25
<i>Ապրանքների արտահանում և ներմուծում</i>	
<i>Ըստ երկրների ԳՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները</i>	
<i>Ըստ երկրների ԳՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները</i>	
<i>Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք</i>	
<i>Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը</i>	
<i>ԳՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը</i>	
Պետական բյուջեի ցուցանիշներ	30
<i>Կենտրոնական բանկի և զանձապետարանի փոխհարաբերությունները</i>	
Դրամավարկային ցուցանիշներ	31
<i>Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ</i>	
<i>Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ</i>	
<i>ԳՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ</i>	
<i>ԳՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ</i>	
<i>ԳՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ</i>	
<i>ԳՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ</i>	
<i>ԳՀ ապահովագրական ընկերությունների ամփոփ ցուցանիշներ</i>	
<i>ԳՀ ֆինանսական համակարգի ամփոփ ցուցանիշներ</i>	
<i>ԳՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ</i>	
<i>Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում</i>	
Ֆինանսական շուկա	43
<i>Տոկոսադրույքներ</i>	
<i>Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը</i>	
<i>Ֆինանսական շուկայում ԳՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները</i>	
<i>Ֆինանսական շուկայում ԳՀ ԿԲ գործառնությունների ծավալը</i>	
<i>ԳՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները</i>	
<i>Ռեսյո շուկայի շրջանառությունը</i>	
<i>Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները</i>	
<i>Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ԳՀ դրամով և արտարժույթով տրամադրված և դեռևս չմարված վարկերի տոկոսադրույքներն ըստ ուղղությունների</i>	
<i>Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ԳՀ դրամով և արտարժույթով տրամադրված և դեռևս չմարված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի</i>	
<i>Պետական կարծաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը</i>	
<i>Պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը</i>	
<i>Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը</i>	
<i>Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը</i>	
<i>ՊՊԴ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները</i>	
<i>Պետական (զանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը</i>	
<i>ԳՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները</i>	
<i>Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները</i>	

77 ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
 Արժութային շուկայում ձևավորված 77 դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
 Արժութային շուկայում ձևավորված 77 դրամ/Եվրո միջին փոխարժեքը
 Արժութային շուկայում ձևավորված 77 դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 62

Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
 77 առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում 77 դրամով
 կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
 77 առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով
 կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
 77 առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված
 վարկային ներդրումներն ըստ ոլորտների
 77 առևտրային բանկերի 77 դրամով վարկային ներդրումները 77
 արդյունաբերության ճյուղերում
 77 առևտրային բանկերի արտարժույթով վարկային ներդրումները 77
 արդյունաբերության ճյուղերում
 77 առևտրային բանկերի վարկային ներդրումները 77 արդյունաբերության
 ճյուղերում
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը ըստ ոլորտների
 77 առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
 Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
 Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ
 ժամկետայնության
 Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
 77 վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում 77
 դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
 77 վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում
 արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
 77 վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում
 կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների

Առևտրային բանկերի ավանդներ 74

Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների

Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 76

Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
 77 առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
 Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների
 մեծությունը
 77 վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց
 փոփոխությունը
 Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության
 նորմատիվի մեծությունը
 77 ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց
 փոփոխությունը
 Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական
 ցուցանիշներ
 Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
 7ավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
 Պահառության վերցված արժեթղթեր
 Գրավատների ցուցանիշներ
 Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ

Վճարահաշվարկային համակարգ 82

Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված
դրամական փոխանցումներ
 77 տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում
 իրականացված փոխանցումներ
 77 առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային
 քարտերով իրականացված գործառնությունները 77 տարածքում ըստ սպասարկման
 միջոցների
 77 բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնությունները
 արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (08.06.2010)

2010 թվականի հունիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2010 թվականի հունիսի 8-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝
ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, նախագահի տեղակալ Վ. Գաբրիելյանը,
խորհրդի անդամներ Ա. Չիլինգարյանը, Ա. Մկրտչյանը, Ա. Նորելյանը,
Վ. Արրահամյանը:

Խորհրդի նիստը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ, որտեղ քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ընթացիկ զարգացումները: Մակրոտնտեսական ցուցանիշների միտումները մայիսին ևս համահունչ էին ԿԲ կանխատեսումներում նախանշված ուղղություններին: Տարեսկզբից դրամավարկային պայմանների շարունակական խստացումն արտացոլվել է գնաճի ցուցանիշում. 12-ամսյա գնաճը նվազել է կանխատեսվածից արագ տեմպերով: Չնայած գնաճային միջավայրի պահպանման ռիսկերին, առաջիկա ամիսներին գնաճի տեմպերը կշարունակեն նվազել՝ պայմանավորված արտաքին հատվածից եկող ազդակներով:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2010 թվականի մայիսին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է 1.0% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճի ցուցանիշը, նախորդ ամսվա նույն ցուցանիշի համեմատությամբ, նվազել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 6.3%: Ընդ որում, պարենային ապրանքների գներն աճել են 1.8%-ով (նպաստումը գնաճին՝ 1.0 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գները՝ 0.9%-ով (նպաստումը գնաճին՝ 0.15 տոկոսային կետ), իսկ ծառայությունների սակագները նվազել են 0.2%-ով (նպաստումը գնաճին՝ -0.1 տոկոսային կետ): Մայիսին արձանագրված գնաճը հիմնականում պայմանավորվել է գյուղատնտեսական սեզոնային ապրանքների գների աճով, որի նպաստումն ընդհանուր գնաճին կազմել է 0.9 տոկոսային կետ: Ծառայությունների սակագների նվազումն արդյունք է օդային տրանսպորտի ուղեվարձի նվազման: Մայիսին գների աճ է արձանագրվել «Հրուշակեղեն», «Մսամթերք», «Կոշկեղեն», «Հագուստ և գործվածք» ապրանքախմբերում՝ գնաճին շուրջ 0.2 տոկոսային կետ ընդհանուր նպաստմամբ: Գնաճը որոշ չափով զսպվել է ձվի և շաքարավազի գների անկման արդյունքում:

ՀՆԱ իրական աճը հունվար-ապրիլին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 7.2%: Նման բարձր ցուցանիշը ձևավորվել է ինչպես մակրոտնտեսական իրավիճակի բարելավման, այնպես էլ 2009 թվականի նույն ժամանակահատվածում իրական ՀՆԱ-ի կտրուկ նվազման բազային ազդեցության արդյունքում: Բացի գյուղատնտեսությունից՝ իրական աճ է արձանագրվել տնտեսության մյուս ճյուղերում. արդյունաբերության ճյուղում արձանագրվել է ավելացված արժեքի 9%, շինարարությունում՝ 19.1%, ծառայությունների ոլորտում՝ 6% աճ: Գյուղատնտեսությունում արձանագրվել է ավելացված արժեքի 6% անկում՝ պայմանավորված բուսաբուծության ենթաճյուղում 19% անկմամբ:

Շարունակվել է արտաքին առևտրի աճը. հունվար-ապրիլին արտահանման 64.3% աճը ձևավորվել է մետաղների միջազգային գների բարձր մակարդակի (չնայած մայի-

սին դրանց դոլարային գների որոշ չափով նվազմանը), խոշոր արտահանող ճյուղերին Կառավարության աջակցության, ինչպես նաև նախորդ տարվա ընթացքում արտահանման կտրուկ նվազման բազային ազդեցություններով: Ներմուծումը հունվար-ապրիլին ավելացել է 24.4%-ով՝ հիմնականում ներդրումային ապրանքների և վառելիքի ներմուծման ծավալների ավելացման հաշվին:

Ներկայացվեցին նաև ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումները: Մայիսին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է դոլարայնացման մակարդակի նվազում. դրամով ավանդներն ավելացել են 0.1%-ով, արտարժույթով ավանդները նվազել են 3.5%-ով: Չնայած դրան, ամսվա ընթացքում տրամադրված արտարժույթով վարկերի ծավալները գերազանցել են դրամով վարկավորման ծավալները:

Տարեսկզբից վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացման և փողի առաջարկի խիստ կարգավորման պայմաններում միջբանկային ռեպո շուկայում տոկոսադրույքներն ապրիլի վերջին հասան դրամավարկային քաղաքականության խստացման ամբողջ ժամանակաշրջանի առավելագույն մակարդակին, իսկ մայիսին որոշակիորեն ճշգրտվեցին նվազման ուղղությամբ: Ի տարբերություն միջբանկային ռեպո շուկայի՝ պետական պարտատոմսերի առաջնային շուկայում տոկոսադրույքները, տեղաբաշխման ընթացքում ծավալների կրճատման պարագայում մնալով կայուն, դրամավարկային պայմանների խստացմանն արձագանքել են ավելի ուշ՝ աճելով միայն ապրիլի վերջին:

Արդյունքում, մայիսին ֆինանսական շուկայում արձանագրվել է հետևյալ պատկերը. ՊՊ առաջնային և երկրորդային շուկաներում արձանագրվել են տոկոսադրույքների աճ, մասնավորապես՝ ՊՊ առաջնային շուկայում մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերի տոկոսադրույքներն աճել են 3.2 տոկոսային կետով, իսկ 3-5 տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերինը՝ 0.91 տոկոսային կետով: Ռեպո շուկայում նկատվել է հակառակ միտումը՝ տոկոսադրույքները նվազել են 1.43 տոկոսային կետով:

Իրավիճակային հաշվետվության ներկայացումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին և ներքին զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ: Քննարկվեցին գնաճի ցուցանիշի վրա մինչև տարեվերջ տնտեսության ներքին և արտաքին հատվածներից եկող լրացուցիչ ճնշումները: Գյուղատնտեսական սեզոնային ապրանքների գների՝ կանխատեսվածից բարձր հավանական աճը որոշ չափով կչեզոքացվի մասնավոր հատվածի ծախսումների նվազմամբ:

Արտաքին հատվածից եկող ազդակները գնանկումային են՝ պայմանավորված հումքային և պարենային ապրանքների միջազգային գների նվազմամբ և դրամի փոխարժեքի վարքագծով: Այդուհանդերձ, արտաքին հատվածում ակնկալվող զարգացումներն էապես նվազեցնում են նշված ապրանքների գների, ինչպես նաև ընդհանուր իրավիճակի վերաբերյալ կանխատեսումների հավաստիությունը: Մասնավորապես, 2010 թվականի մայիսին կրկին սրվեցին ֆինանսական ճգնաժամի կրկնվելու ռիսկերը՝ պայմանավորված որոշ եվրոպական երկրների պետական պարտքի կայունության խնդիրների առաջացմամբ: Այս զարգացումների պայմաններում ԱՄՆ դոլարն էականորեն արժևորվեց (ապրիլի համեմատությամբ՝ 6.6%-ով) եվրոյի նկատմամբ: Նկարագրված իրավիճակում առաջատար երկրների կենտրոնական բանկերը դեռևս պահպանում են վերաֆինանսավորման տոկոսադրույքի ցածր մակարդակը, թեև դադարեցրել են քանակական ընդլայնման քաղաքականության պայմաններում կիրառվող որոշ գործիքների օգտագործումը: Անդրադառնալով ԱՄՆ դոլարի նկատմամբ եվրոյի արժեզրկման միտումների՝ ՀՀ տնտեսության վրա հնարավոր ազդեցություններին՝ խորհուրդը նշեց, որ ներկա անորոշությունների գերակայության պայմաններում կշարունակի հետևել իրավիճակի զարգացումներին:

Անդրադառնալով գնաճի հետագա զարգացումներին և դրամավարկային քաղաքականության ուղղություններին՝ խորհուրդն ամփոփեց, որ թեև պահպանվում է գնաճային միջավայրը՝ կապված 2009 թ. իրականացրած դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ընդլայնողական ազդեցությունների փոխանցման հետ, այնուամենայնիվ, առաջիկա ամիսներին գնաճի տեմպերը նվազելու են՝ պայմանավոր-

ված հումքային և պարենային ապրանքների միջազգային գների նվազմամբ և դրամի փոխարժեքի ներկա վարքագծով: Այս իրավիճակում Խորհուրդը քննարկեց վերաֆինանսավորման տոկոսադրույքն անփոփոխ թողնելու և այն 0.25 տոկոսային կետով բարձրացնելու տարբերակները: Առկա են անորոշություններ տնտեսության ինչպես արտաքին, այնպես էլ ներքին միջավայրում: Եվրոմիության որոշ անդամ երկրների պարտքային հիմնախնդիրների հետևանքների վերաբերյալ տարաբնույթ սպասումներն էապես ավելացրել են հումքային և պարենային ապրանքների միջազգային գների հետագա վարքագծի անորոշությունները: Մյուս կողմից՝ դեռևս անորոշ է գյուղատնտեսական սեզոնային ապրանքների գների վարքագիծը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Խորհուրդը նպատակահարմար գտավ ձեռնպահ մնալ դրամավարկային պայմանների փոփոխություններից և անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 7.25%:

Խորհուրդն անդրադարձավ մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույքներին և որոշեց նվազեցնել լոմբարդային ռեպո տոկոսադրույքը 2 տոկոսային կետով՝ սահմանելով այն 10.25%՝ նպատակ ունենալով վերադառնալ քաղաքականության հիմնական գործիքի տոկոսադրույքից մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույքների հավասարաչափ՝ +/-3 տոկոսային կետով հեռացված լինելու սկզբունքին: ԿԲ կողմից առևտրային բանկերի միջոցների ներգրավման տոկոսադրույքը մնաց անփոփոխ՝ 4.25%: